

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*2012 թվականին*

*կատարած աշխատանքների*

ԵՐԵՎԱՆ 2013

**Կազմող՝ Յ. Ղազարյան**

**«Գիրք» հրատարակչություն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ**  
**2012թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

Հայաստանի ազգային գրադարանի ընդհանուր ֆոնդը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 6.802.157 միավոր, որից՝ գործող ֆոնդը՝ 6.575.590 միավոր, գրքափոխանակության ֆոնդը՝ 110.871 միավոր, պահուստային ֆոնդը՝ 115.696 միավոր:

2012 թվականի ընթացքում ստացվել է 44.510 միավոր, որից՝ սուբսիդիայի հաշվին՝ 2.502 միավոր: Դրանից՝ 2.308 միավոր գիրք, 122 անուն պարբերական, 70 միավոր այլ նյութական կրիչներ /46 CD, 6 հուշամեդալ, 12 պլակատ, 6 քարտեզ/, 2 միավոր էլեկտրոնային հրապարակումներ: 42.008 միավոր համալրվել է այլ աղբյուրների հաշվին: 14.273 միավորը պարտադիր օրինակների քանակն է:

Հայաստանի ազգային գրադարանի ֆոնդերը համալրվում են ոչ միայն վերոնշյալ ուղիներով, այլև արտասահմանյան ստացումների՝ միջազգային գրքափոխանակության և նվիրատվության միջոցով:

«Նվեր» աղբյուրով ստացվել է 24.273 միավոր, այդ թվում՝ գիրք՝ 14.097, պարբերական՝ 8.005, նյութական այլ կրիչներ՝ 2.171 միավոր:

2012թ. միջազգային գրքափոխանակության միջոցով ստացվել է 1.197 միավոր գրականություն, հայաստանյան գրքափոխանակությամբ՝ 336 միավոր, ընդհանուր թիվը կազմել է 1.533 միավոր:

Արտերկրից 2012թ. նվեր է ստացվել 4.725 միավոր գրականություն, որից 3.077 գիրք, 1.578 միավոր հանդես, 70 կազմ լրագիր:

Ազգային գրադարանը համագործակցում է Հայաստանում գործող 21 դեսպանատների և 22 միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ:

2012թ. 500 միավոր գրականություն է տրամադրվել հայկական համայնքներին. Ուկրաինայի հայ համայնքին՝ 113, Իրանի «Ռաֆֆի» համալիրին՝ 39, Բելգիայի հայ համայնքին՝ 61, Դոնի Ռոստովի հայ համայնքին՝ 5, հայ-լեհական կոմիտեին՝ 253, Բրատսկի հայ համայնքին՝ 29 միավոր:

Հաշվետու տարում գրադարանի տարբեր ընթերցասրահներից օգտվել է 27.264 ընթերցող, տրվել է 1.564.073 միավոր գրականություն:

Գրադարանի ընթերցողների 69%-ը 17-40 տարեկան է:

ՄԱԿ-ի հրատարակությունների ավանդապահ ընթերցասրահում սպասարկվել են նաև Համաշխարհային բանկի, Եվրախորհրդի, ՆԱՏՕ-ի հրատարակությունները:

Հաշվետու տարում միջգրադարանային բաժնույթից օգտվել է 94 բաժանորդ, տրվել է 1.243 միավոր գրականություն: Միջազգային միջգրադարանային բաժնույթով այլ գրադարաններ է ուղարկվել 73 գրքի պատվեր, որից 38-ը կատարվել է, 35-ը՝ մերժվել:

Ազգային գրադարանը այլ գրադարաններից ստացել է 5 պատվեր, որը բավարարվել է: Կնքվել են նոր պայմանագրեր հայաստանյան բուհերի հետ՝ միջգրադարանային բաժնույթից օգտվելու համար:

2012թ. Ազգային գրադարանը կազմակերպել է 80 միջոցառում: Դրանցից 63-ը անց է կացվել գրադարանում, 17-ը՝ Երևանյան և մարզային մշակութային կենտրոններում:

Կազմակերպված միջոցառումներն ունեցել են տարբեր բնույթ՝ հայ գրատպության 500-ամյակին և Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակմանը նվիրված հոբելյանական ցերեկույթներ, գիտաժողովներ, գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ արվեստի և գրականության, գրադարանային ոլորտի մշանավոր ներկայացուցիչների հետ, ֆիլմերի ցուցադրություն, գրական քննարկումներ և այլն:

Գրադարանն անդրադարձել է կառավարական մակարդակով մշված բոլոր միջոցառումներին, իրականացվել են սուբսիդիայով նախատեսված բոլոր միջոցառումները՝ Ազգային գրադարանային շաբաթ, Գրադարանավարի օր, Թարգմանչաց տոն, Գրադարանային երեկո, Մայրենի լեզվի միջազգային օր, Գրքի և հեղինակային իրավունքի միջազգային օր, «Հիշատակ Նահատակաց», գրադարանավարների համահայկական համաժողով, «Կարեն Դեմիրճյան-80», «Լուսինե Ջաքարյան-75», «Գալյա Նովենց-75», «Օհան Դուրյան-90», «Տիգրան Չուխաջյան-175»:

Տարվա ընթացքում հայ գրատպության 500-ամյակի շրջանակներում առավել ուշագրավ միջոցառումներից են Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Յեֆֆերնի, Կոնգրեսի գրադարանի ներկայացուցիչների և այլ օտարերկրյա հյուրերի այցը Ազգային գրադարան, «Գաֆեսճյան» արվեստի կենտրոնում անցկացված "ArmBookExpo" ցուցահանդեսը, «Գուտենբերգից մինչև ինտերնետ. անավարտ պատմությունը գրադարանների համար» միջազգային գիտաժողովը Հայաստանի ամերիկյան համալսարանում, «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովը, «Գրության, ընթերցանության և տպագրության նոր կիրառությունը թվանշային գրադարանում» կլոր սեղանը Ազգային գրադարանում:

Հաշվետու տարում տրվել է 19 գրավոր մատենագիտական տեղեկանք:

Հետևողական աշխատանք է տարվել գրադարանային հավաքածուների պահպանման և խնամքի ուղղությամբ:

Ստուգվել են գլխավոր գրապահոցի հավաքածուների 14.000 գծանետրի վրա տեղադրված գրքերը, վերականգնվել է 22.930 թերթ-միավոր, ախտահանվել է 21.320 թերթ-միավոր, կատարվել է 389 կաշեկազմ գրքերի կազմի փափկեցում, մաքրվել է 125 միավորի բորբոսային շերտը:

Մշակութային նշանակության հավաքածուից 73 միավոր գրքի կազմ վերականգնվել է գրադարանի համապատասխան բաժնի ուժերով:

Մատենադարան լիարժեք վերականգնման է հանձնվել 5 հնատիպ գիրք:

Շարունակվել են գրադարանի գլխավոր գրապահոցի ֆոնդի անվանական վերահաշվառման աշխատանքները: Հաշվետու տարում վերահաշվառվել է 236.184 միավոր գրականություն:

Մամուլի ենթաբաժնում վերահաշվառվել է 196.605 ռուսերեն միավոր, այդ թվում 61.197 միավոր ռեֆերատիվ հանդես, 135.408 միավոր ամսագիր: Գրապահոցի ֆոնդից ALEPH ծրագրով մուտքագրվել է 39.579 միավոր, որից՝ ա/ գրքեր 34.516 միավոր, այդ թվում ռուսերեն

32.648 միավոր, օտարալեզու՝ 1.868 միավոր և ք/ հանդեսներ՝ 5.063 միավոր, որից ռուսերեն՝ 2.686 և այլալեզու հայագիտական՝ 2.377 միավոր:

Նախապատրաստական աշխատանքներ են տարվել 2013թ. հունվարից հավաքածուների չափսահամարային դասակարգման անցնելու ուղղությամբ:

Ընթացիկ տարում տպագրվել են «Հիշարժան տարեթվեր - 2013» օրացույցը, «Հայաստանի գրադարանները 2011 թվականին» աշխատանքների վիճակագրական վերլուծությունը, «Անանիա Շիրակացի. Կենսամատենագիտություն»: «Նոր գրքեր» հայերեն կիսամյակային տեղեկատու ցանկի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է գրադարանի կայքում /www.nla.am, ՀԱԳ հրատարակություններ/: «Հայաստանի ազգային գրադարանի գանձեր» և «Հայ գիրքը 1921-1930թթ.» մատենագիտությունը պատրաստ են տպագրության:

Պարբերաբար լույս է տեսել գրադարանի ամենամսյա «Հոգևոր Հայրենիք» պաշտոնաթերթը, որի էլեկտրոնային տարբերակը նույնպես տեղադրված է գրադարանի կայքում:

Տարվա ընթացքում շրջիկ գրադարանով՝ Բիբլիոբուսով այցեր են կատարվել Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Արագածոտնի մարզեր:

2012թ. ընթացքում Արմավիրի մարզի 9 գրադարանի նվիրվել է 513 միավոր, Գեղարքունիքի մարզի 13 գրադարանի՝ 708 միավոր, Լոռու մարզի 6 գրադարանի՝ 454, Արագածոտնի մարզի 6 գրադարանի՝ 270, Կոտայքի մարզի 1 գրադարանի՝ 11 միավոր գրականություն: Գրքեր են տրամադրվել նաև այլ գրադարանների՝ ընդհանուր հաշվով 3.069 միավոր: Թվայնացման կենտրոնում թվանշացվել է 315 միավոր գիրք՝ 79.389 էջ: Ազգային գրադարանում կատարվել են 10 գրադարանի նրբաթել կողերի տպագրման աշխատանքները, տպագրվել է 462.000 պիտակ:

2012թ. ընթացքում գրադարանի կայքում տեղադրվել են 24 քարտեզի, 155 հնատիպ գրքի և 160 հայագիտական հրատարակության թվանշացված տարբերակները, տպարանների էլեկտրոնային շտե-

մարանում կատարվել է 33 տպարանի պատմության վերաբերյալ գրառում:

Շարունակվում են Հայաստանի Հանրապետության խոշոր գրադարանների միասնական էլեկտրոնային քարտարանի ստեղծման աշխատանքները:

Հայաստանի ազգային գրադարանը կազմակերպել և մասնակցել է հայկական տպագրության 500-ամյակի և Երևանը համաշխարհային գրքի մայրաքաղաքի շրջանակներում գիտաժողովների, ցուցահանդեսների, խորհրդաժողովների և այլ միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը:

Գրադարանի առջև ծառայած խնդիրները քննարկվել և լուծում են ստացել տնօրենության և գիտական խորհրդի նիստերում:

## **ՀԱՄԱԼՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Համալրման բաժնում հաշվետու տարում համակարգված աշխատանքներ են տարվել հավաքածուի ընթացիկ և հետադարձ համալրման ուղղությամբ:

2012 թվականին գրադարանի ընդհանուր հավաքածուն համալրվել է 44.510 միավոր գրականությամբ:

Գրադարանի գործող հավաքածուն 2012 թվականին համալրվել է 37.545 միավոր գրականությամբ: Գործող հավաքածուի պատկերը ըստ լեզուների հետևյալն է՝ հայերեն՝ 1.579.180 միավոր, ռուսերեն՝ 4.426.037 միավոր և այլ լեզուներով՝ 607.918 միավոր:

Հաշվետու տարում գրադարանի պահուստային հավաքածուն համալրվել է 2.567 միավոր գրականությամբ, ելքը կազմել է 148 միավոր: Պահուստային հավաքածուն կազմում է 118.115 միավոր:

Այսպիսով, գրադարանի ընդհանուր հավաքածուն 2013թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 6.846.667 միավոր գրականություն, որից գործող հավաքածուն՝ 6.613.135 միավոր, պահուստային հավաքա-

ծուՆ՝ 118.115 միավոր, գրքափոխանակության հավաքածուՆ՝ 115.417 միավոր:

Ընթացիկ տարում գրականությունը ստացվել է պարտադիր օրինակի, նվիրատվությունների, բաժանորդագրության, գնման, փոխանակության միջոցով:

Հայրենական և արտասահմանյան հրատարակությունների ենթաբաժնի միջոցով է իրականացվում հավաքածուների համալրումը հանրապետությունում և արտասահմանում հրատարակված տպագիր արտադրանքով: Հաշվետու տարում ենթաբաժնի միջոցով ստացվել է 31.610 միավոր գրականություն, որից 3068 գրադարանի համար նոր անուն գիրք (2269 անունը՝ հայրենական հրատարակություններ):

Հետևողական աշխատանք է տարվել 1 օրինակ գրքերը բազմօրինակ դարձնելու ուղղությամբ: Տարվա ընթացքում 47 անուն 1 օրինակ գրքեր դարձել են բազմօրինակ:

2012 թվականին գրադարանի համալրողները համագործակցել են 200 հրատարակչությունների և կազմակերպությունների հետ: Ենթաբաժնի միջոցով ձեռք է բերվել 19 անուն թերթ և 62 անուն ամսագիր: Պարբերաբար լրացվել են ենթաբաժնի ընթացիկ այբբենական, նվիրատուների, մեկ օրինակ գրքերի, հրատարակչությունների քարտարանները:

Ենթաբաժինը մասնակցել է «Երևանը՝ 2012թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» հորելյանական միջոցառումների շրջանակում ARM BOOK EXPO ցուցահանդեսի կազմակերպմանը:

Ցուցակագրվել և սկանավորվել է մոտ 3000 միավոր գիրք: Այս շրջանակներում կազմակերպված ցուցադրությանը ներկայացվել է 41 երկրներում հրատարակված գրականություն: Աշխատանքները նպաստել են ոչ միայն ցուցահանդեսի կատալոգի հրատարակմանը, այլ նաև համալրել են Ազգային գրադարանի հավաքածուն հայալեզու և օտարալեզու արժեքավոր հայագիտական 2378 միավոր /1941անուն/ գրականությամբ:



Ընթացիկ տարում պարբերական հրատարակությունները համալրվել են պարտադիր օրինակ, բաժանորդագրություն, նվեր ճանապարհով:

2012թ. գրադարանի մամուլի հավաքածուն համալրվել է հիմնականում պարբերական մամուլի ենթաբաժնի միջոցով: Տեղական մամուլը ստացվել է «Հայմամուլ» գործակալության միջոցով, ռուսական մամուլի բաժանորդագրությունը իրականացվել է «ԱԶ Գևորգ Քերոբյան» ընկերության, «Էքսպրեսս պլուս», «Պրեսս Ատտաշե», «Պրեսս Ստենդ», գործակալությունների միջոցով: Հաշվետու տարում բաժանորդագրությամբ ստացվել է 122 անուն պարբերական մամուլ, որից՝ 89 անուն ամսագիր (5-ը՝ տեղական) և 33 անուն լրագիր, որից 17՝ տեղական:

Պարտադիր օրինակով ստացվել է 369 անուն պարբերական, որից 129 անուն լրագիր (40-ը՝ Հայմամուլի միջոցով), 240 ամսագիր: Խմբագրություններից, կազմակերպություններից պարտադիր և նվերի կարգով ստացված 129 անուն լրագրից 23-ը մարզային է: Տեղական հրատարակության պարտադիր և նվերի կարգով ստացված 240 անուն ամսագրից՝ 24-ը ռուսերեն, 2 օտար լեզվով է: Սփյուռքից ստացվել է 61 անուն ամսագիր, որից 9- ԱՊՀ երկրներից և 42 անուն լրագիր, որից 17 ԱՊՀ երկրներից:

Նվեր աղբյուրով ստացվել է ՌԴ-ում հրատարակված 22 անուն ռուսերեն ամսագիր:

Հայերեն լեզվով ստացվել է 43 նոր անուն ամսագիր, ռուսերեն՝ 31, օտար լեզվով՝ 101, ընդամենը 175:

Հայերեն լեզվով ստացվել է 23 նոր անուն լրագիր, ռուսերեն՝ 7, ընդամենը 30 անուն:

2012 թվականին ընդլայնվել են կապերը Ռուսաստանի և արտասահմանյան երկրների մի շարք հանդեսների խմբագրությունների և հրատարակչական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ, ինչի արդյունքում գրադարանի հավաքածուները համալրվել են 204 անուն լրագրով և 833 անուն ամսագրով:

Հաշվետու տարում որպես պարտադիր օրինակ ստացվել է 14.273 միավոր գրականություն, որից 10.951 միավոր գիրք, 240 անուն ամսագիր և 129 անուն լրագիր:

Հաշվառման և գրանցման ենթաբաժնում են կենտրոնացված գրադարան մուտք գործած գրականության հաշվառման, գրանցման և համապատասխան հավաքածուներ առաքելու աշխատանքները: Ընթացիկ տարում ենթաբաժնում մուտք է արվել 47349 (որից 2839 միավոր ներքին շարժն է) միավոր գրականություն:

Գրականության հաշվառումը և գրանցումը կատարվել է ըստ գրականության արժեքի, միավորների, տեսակների, գիտության ճյուղերի և լեզուների:

Տարվա ընթացքում կազմվել է 853 ուղեկցող փաստաթուղթ (ուղեգիր) և գրականությունը հանձնվել է գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժին:

Ցուցակագրվել և պահուստային հավաքածուին է հանձնվել 1.499 միավոր գիրք, գրքափոխանակության հավաքածուին՝ 6.126 միավոր գիրք: Մատյաններում փոխվել է 3.600 միավոր գրքի ուղղություն: Ընթացիկ տարում ենթաբաժնում գույքագրվել է 34.656 միավոր գրականություն:

Հաշվետու տարում գրադարանի պահուստային հավաքածուն ստացել է 2.567 միավոր գրականություն, որից գիրք 1.499 միավոր, 947 միավոր ամսագիր և 121 կազմ լրագիր:

Ազգային գրադարանի տնօրենի հունիսի 19-ի 2012թ. 71-Ա-Տ1 հրամանի համաձայն ստեղծված հանձնաժողովը ստուգեց և վերահաշվառեց Հաշվառման ենթաբաժնի պատասխանատվության տակ գտնվող գրանցման մայր գույքամատյանները:

Հաշվետու տարում պահուստային հավաքածուի ստացումները կազմել են 2.567 միավոր, պահեստից գրադարանի տարբեր հավաքածուներ տրվել է 148 միավոր գրականություն:

Այսպիսով, 2013թ. հունվարի 1-ի դրությամբ գրադարանի պահուստային հավաքածուն կազմել է 118.115 միավոր գրականություն:

Ազգային գրադարանի տնօրենի 15 հոկտեմբերի 2012թ. 141-Լ-Տ1 հրամանի համաձայն հոկտեմբերի 16-ից սկսվել են պահուստային գրականության հավաքածուի քանակական հաշվառման աշխատանքները, որոնք ավարտվել են սահմանված ժամանակահատվածում: Հաշվառման արդյունքում արձանագրվել է 119.000\* միավոր գրականություն. հայերեն՝ 74.993 միավոր գիրք, ռուսերեն՝ 19.698 միավոր գիրք, օտար լեզվով՝ 1.687 միավոր գիրք, 22.622 միավոր մամուլ:

Ազգային գրադարանի տնօրենի մայիսի 15-ի 51-Ա-Տ1 հրամանի համաձայն ստեղծված հանձնաժողովը ստուգեց և գույքամատյանների և կատալոգի հետ համեմատեց Պահուստային գրականության ենթաբաժնում առկա 1801-1940թթ. լույս տեսած գրականությունը, որը կազմել էր 7.886 միավոր /հայերեն՝ 6.318, ռուսերեն՝ 1.506, օտարալեզու՝ 62/:

## **ԳՐՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Գրադարանի գրքափոխանակության գործընթացները իրականացվում են գրքափոխանակության և զարգացման ծրագրերի բաժնի միջոցով:

Առ 01.01.2013թ. գրքափոխանակության հավաքածուն կազմել է 115. 417 միավոր գրականություն, որից հայերեն՝ 66.424 միավոր, ռուսերեն և այլ լեզուներով՝ 48.993 միավոր:

Հաշվետու տարում հավաքածուն համալրվել է 7.796 միավոր գրականությամբ, որից գիրք՝ 6.214 միավոր, 1.564 միավոր ամսագիր և մանր նյութ՝ 18 միավոր:

Բաժնի ելքը 2012թ. կազմել է 9.480 միավոր, որից ՀՀ և արտասահմանյան գրադարաններին, կազմակերպություններին ու անհատներին տրվել է 8.076 միավոր գրականություն, իսկ գրադարանի համապատասխան բաժիններին՝ 1.404 միավոր:

---

\* Ստուգման աշխատանքները շարունակվում են

Հավաքածուների ենթաբաժինն է հանձնվել Ավո Հովհաննիսյանի գրքերից 17 միավոր, գրապահոց է հանձնվել ռուսերեն լեզվով գրքերից՝ մինչև 1920 թ. հրատարակություններից 358 միավոր, իսկ պահուստային ենթաբաժինը՝ 2.062 միավոր գրականություն:

Տարվա ընթացքում կազմատուն է ուղարկվել 147, վերականգնման է ուղարկվել 324 միավոր գիրք:

2012թ. հայտարարված գրքահավաքի արդյունքում հավաքվել է 967 միավոր գրականություն, որից 372-ով լրացվել է գրադարանի հավաքածուն, իսկ մնացած 595 միավորը փոխանակության հավաքածուի գրականության հետ հանձնվել «Կոշ» ՔԿՀ-ին:

«Վարպետաց դասեր» ծրագրի շրջանակում 60 գրադարաններին գրքափոխանակության հավաքածուից տրվել է 801 միավոր գրականություն: Օգոստոս ամսին Սայր Աթոռ Ս. Էջմիածնի Հառիճի ընծայարանի գրադարանին նվիրվել է 1.405 միավոր գրականություն:

2012թ. հայկական բանակի կազմավորման օրվա առթիվ կազմակերպված միջոցառման շրջանակում ՀՀ ՊՊ Մ.Մելքոնյանի անվ. ռազմամարզական վարժարանին՝ 103 միավոր,

ՀՀ Վ.Սարգսյանի անվ. ռազմական ինստիտուտին՝ 853 միավոր,

«Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառման մասնակիցներին տրվել է 130 միավոր գրականություն:

Հոբելյանական 2012 թ. շրջիկ գրադարանով /բիրլիորուսով/ այցելություն է կատարվել 5 մարզ և գրականություն հանձնվել 39 գրադարանի:

30.05.2012թ. Արմավիրի մարզի 9 գրադարան 513 մ.

1.06.2012թ. Քանաքեռավանի գրադարան և արվեստի դպրոց 85 մ.

22.06.2012թ. Կոտայքի մարզ -1 գրադարան	61 մ.
21.08.2012թ. Արագածոտնի մարզ - 6 գրադարան	270 մ.
31.08.2012թ. ՀՀ«Կոշ» քրեակատարողական հիմնարկի գրադարան	967 մ.
16. 10. 2012թ. Գեղարքունիքի մարզ - 13 գրադարան	708 մ.
23.10. 2012թ. Լոռու մարզ - 6 գրադարան	454 մ.
12.10.2012թ. Կոտայքի մարզ -1 գրադարան	11 մ.

2012թ. ընթացքում 500 մ. գրականություն է նվիրվել արտերկրի հայկական համայնքներին`

Օդեսայի մարզային հայ համայնքի գրադարանին,  
 Հայ-լեհական հասարակական կոմիտեին,  
 Բրատսկի կենտրոնացված համակարգի գրադարանին,  
 Թեհրանի «Րաֆֆի» համալիրին,  
 Բելգիայի հայ համայնքի գրադարանին,  
 Դոնի Ռոստովի հայկական համայնքին:

Տարվա ընթացքում միայն փոստով ուղարկվել են 193 միավոր գրականություն և նամակներ /փոստային ծախսը` 323925 դրամ/:

Արտասահմանյան և ՀՀ գրքափոխանակությամբ ստացվել է ընդհանուր առմամբ 1.533 միավոր, տրվել` 1.321 միավոր գրականություն:

Արտասահմանյան գրքափոխանակությամբ ստացվել է` 1.197 միավոր, որից գիրք` 822 միավոր, ամսագիր` 375 միավոր, լրագիր` 486 միավոր` 8 անուն /23 կազմ/, տրվել է 923 միավոր:

Հայաստանյան փոխանակությամբ ստացվել է` 336 միավոր, տրվել է 398 միավոր գրականություն:

Գրքափոխանակության միջոցով ներկայացված ցուցակներից 2012թ. ընթացքում արտասահմանից ստացվել է 356 միավոր գրականություն:

Գրքափոխանակության շրջանակներում եղել են գրքերի նոր առաջարկներ ՌԴ Ազգային գրադարանին, ՌԴ Պետական գրադարանին, Պուշկինի անվ. գրադարանին, Գիտությունների ազգային Ակադեմիայի գրադարանին, Բելառուսի, Բուլղարիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, Իրանի, Կորեայի ազգային գրադարաններին, Կորեայի ազգային ասամբլեայի գրադարանին, Կորեայի Սահմանադրական Խորհրդի գրադարանին, Կորեայի ազգային թանգարանին, Կորեայի գիտական և տեխնոլոգիական հետազոտական ինստիտուտի գրադարանին, Լեհաստանի ազգային գրադարանին, Չեխիայի ազգային գրադարանին, Չեխիայի միջազգային կապերի ինստիտուտին: Գրքափոխանակության շրջանակներում գրքերի նոր ցուցակներ են ստացվել Բելառուսի, Բուլղարիայի, Լեհաստանի, Իրանի, ՌԴ, Ճապոնիայի, Կորեայի, Չեխիայի ազգային, ՌԴ պետական և ՌԴ ԳԱԱ գրադարաններից:

2012թ. Հայաստանի ազգային գրադարանը համագործակցել է արտերկրի 43 երկրների 162 կազմակերպությունների, գրադարանների և անհատների հետ:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ**

Գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժինը 2012 թվականին համալրման բաժնից ստացել է 38.482 միավոր գրականություն, որից` 17.682 գիրք, 9.758 ամսագիր, 271 շարունակվող հրատարակություններ, 1891կազմ թերթ, 5.408 սեղմագիր, 576 ատենախոսություն, 253 էլեկտրոնային կրիչ (DVD, CD), 1.456 խմբային մշակման և մանր նյութեր և 1.187 ոչ գրքային հրատարակություններ:

Հաշվետու տարում հայերեն գրականության մշակման ենթաբաժինը ստացել է 18.073 միավոր գրականություն, որից` 8.726 գիրք,

5.157 ամսագիր, 1.649 կազմ թերթ, 782 միավոր ոչ գրքային հրատարակություններ, 121 CD, 39 DVD և 893 միավոր մանր նյութ, 325 սեղմագիր, 381 ատենախոսություն:

Գրքերից 2.330 միավոր՝ որպես առաջին օրինակ, ուղարկվել է հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժին:

Ստացված գրականությունը մշակվել է և այբբենական ծառայողական գրացուցակում տեղադրվել է 3.020 քարտ, ընթերցողական գրացուցակում՝ նույնքան քարտ: Խմբագրվել է այբբենական գրացուցակի 24 արկղ:

Դասակարգվել է 2.330 միավոր գրականություն: Կարգային ծառայողական գրացուցակում տեղադրվել է 3.070 քարտ, նույնքան քարտ տեղադրվել է ընթերցողական գրացուցակում: Խմբագրվել է կարգային գրացուցակի 12 արկղ: Կատարվել է 48 քարտի անճշտությունների ուղղում:

Տարվա ընթացքում մշակվել է 5.157 ամսագիր և 1.649 կազմ թերթ: Ամսագրերից 1.587 միավոր՝ որպես առաջին օրինակ, ուղարկվել է հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժին: Մշակվել է 43 նոր անուն ամսագիր:

Խմբագրվել է գրացուցակի 10 արկղ:

419 կազմ թերթ՝ որպես առաջին օրինակ, ուղարկվել է հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժին: Մշակվել է 27 նոր անուն թերթ:

Հաշվետու տարում ստացվել է 9.678 միավոր ռուսերեն գրականություն, որից 4.780 միավոր գիրք, 3.183 միավոր ամսագիր, 222 կազմ թերթ, 271 միավոր շարունակվող հրատարակություններ, 21 CD, 278 խմբային մշակման և մանր նյութեր, 578 միավոր սեղմագիր, 154 միավոր ատենախոսություն և 191 միավոր ոչ գրքային հրատարակություններ:

Գրքերից 2.960 միավորը մշակվել է որպես առաջին օրինակ: Ստացված ամբողջ գրականությունը մշակվել է և այբբենական ծառայողական գրացուցակում տեղադրվել է 3.900 քարտ, նույնքան քարտ տեղադրվել է ընթերցողական գրացուցակում:

Խմբագրվել է ծառայողական գրացուցակի 40, ընթերցողական գրացուցակի` 35 արկղ:

Դասակարգվել է 2.960 միավոր գրականություն: Կարգային ծառայողական գրացուցակում տեղադրվել է 4.000 քարտ, նույնքան էլ` ընթերցողական գրացուցակում: Կատարվել է 285 գրքերի քարտերի անճշտությունների ուղղում: Խմբագրվել է ծառայողական գրացուցակի 30, ընթերցողական գրացուցակի` 25 արկղ:

2012թ. նշակվել է 3.183 միավոր ամսագիր, որից 2.987-ը ուղարկվել է գլխավոր գրապահոց: Մշակված ամսագրերից 31-ը նոր անուն են գրադարանի համար:

Մշակվել է 271 կազմ թերթ, խմբագրվել է ամսագրերի և թերթերի գրացուցակի 48 արկղ:

Տարվա ընթացքում ստացվել է 154 ատենախոսություն և 578 սեղմագիր, 278 մանր նյութ, 191 ոչ գրքային հրատարակություն:

2012 թվականի ընթացքում ստացվել է 10.731 միավոր գրականություն այլ լեզուներով, որից 4.176 գիրք, 1.418 ամսագիր, 20 կազմ թերթ, 211 միավոր ոչ գրքային հրատարակություններ, 61 CD, 11 DVD, 285 խմբային և մանր նյութ, 4.504 սեղմագիր, 45 ատենախոսություն:

Գրքերից 2.491-ը ուղարկվել է գլխավոր գրապահոց: Այբբենական ծառայողական և ընթերցողական գրացուցակներում տեղադրվել է 3.800-ական քարտ: Խմբագրվել է ծառայողական գրացուցակի 15, ընթերցողական գրացուցակի 20 արկղ:

Ստացված ամբողջ գրականությունը դասակարգվել է: Կարգային ծառայողական գրացուցակում տեղադրվել է 3.900 քարտ, նույնքան` ընթերցողական գրացուցակում: Խմբագրվել է ծառայողական գրացուցակի 15, ընթերցողական գրացուցակի 20 արկղ:

Հաշվետու տարում ստացվել է 1.418 ամսագիր և 20 կազմ թերթ: Ամսագրերից 1.215-ը ուղարկվել է գլխավոր գրապահոց: Մշակվել է 10 նոր անուն ամսագիր: Խմբագրվել է գրացուցակի 12 արկղ:

Մշակվել է 20 կազմ թերթ և ուղարկվել է գրապահոց:

2012 թվականին ևս շարունակվել են գլխավոր գրապահոցի հավաքածուի անվանական վերահաշվառման հետ կապված աշխատանք-



ները: Վերահաշվառվել է 135.408 միավոր ռուսերեն և 2.422 միավոր այլ լեզուներով ամսագիր:

## **ՖՈՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՊԱՅՊԱՆՈՒՄ**

Գրադարանի գործող հավաքածուն 2013թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 6.613.135 միավոր:

2012 թվականին գլխավոր գրապահոցի հավաքածուն համալրվել է 25.865 միավոր նոր ստացված գրականությամբ, որից 11.784 գիրք, 7.756 ամսագիր, 1.421 կազմ լրագիր, 4.904 միավոր սեղմագիր:

Այսպիսով, 2013թ. հունվարի 1-ի դրությամբ գլխավոր գրապահոցի հավաքածուն կազմել է 5.870.733\* միավոր գրականություն, ինչը կազմում է գրադարանի գործող հավաքածուի 89,3%-ը:

Ստացված գրականությունը գրանցվել է գրապահոցի համապատասխան մատյաններում, դասդասվել է և տեղադրվել դարակների վրա: Լրագրերը և ամսագրերը գրանցվել են մամուլի ենթաբաժնի քարտարաններում, իսկ նոր անունների համար նոր քարտեր են գրվել:

Հաշվետու տարում գլխավոր գրապահոց մուտք է գործել 107.398 պատվիրաթերթիկ, բավարարվել է 105.221 պատվեր, որից 9.523 պատվեր զբաղված է եղել ընթերցասրահներում և բավարարվել է համապատասխան տեղերում: Ջբաղված է եղել 2.177 պատվիրաթերթիկ:

2012թ. գլխավոր գրապահոցի գրականության կոմպ. և տեղ. կազմել է 180.515 միավոր, որից վերադարձը՝ 105.221 միավոր, նոր ստացումները՝ 25.865, ALEPH ծրագրով մուտքագրման համար տրված գրականությունը՝ 39.579, կազմատուն և խնամքի բաժին հանձնած և հետ բերված գրականությունը՝ 8.150, «Գաֆեսճյան» արվեստի կենտրոնում ցուցադրված և վերադարձված գրականությունը՝ 1.700 միավոր: Ողջ գրականությունը դասդասվել և տեղադրվել է

---

\* Ֆոնդը ստուգման և վերահաշվառման գործընթացում է

գրադարակների վրա: Տարվա ընթացքում կատարվել է 770.000 միավոր գրականության ստուգում-տեղաշարժ:

Շարունակվել են գլխավոր գրապահոցի ֆոնդի անվանական վերահաշվառման աշխատանքները:

2012թ. ընթացքում ALEPH ծրագրի միջոցով մուտքագրվել է 39.579 միավոր գրականություն, որից գիրք՝ 34.516 միավոր /ռուսերեն՝ 32.648, այլալեզու՝ 1.868 միավոր/, հանդես՝ 5.063 միավոր /ռուսերեն՝ 2.686, այլալեզու հայագիտական՝ 2.377 միավոր/: 2012թ. ընթացքում 196.605 միավոր տպագիր արտադրանքի ստուգում է կատարվել:

Տարվա ընթացքում հետևողական աշխատանք է տարվել ֆոնդերի պահպանման և վերականգնման ուղղությամբ: Մաքրվել և փոշեհանվել է 755.000 միավոր գրականություն: Կազմատուն և գրքի խնամքի բաժին է ուղարկվել և ետ բերվել 8.150 միավոր գրականություն, որից ախտահանվել է 6.000 միավորը, վերականգնվել է 19 գրքի 838 էջ:

2012թ. բաժնում կազմվել է 13 ակտ և ըստ այդ ակտերի բաժնի ֆոնդերից ՀՀԱԳ բաժնին է հանձնվել 749 միավոր գրականություն: Բոլոր ակտերը կից ցուցակներով կնքվել և ստորագրվել են գրադարանի տնօրենի կողմից:

Ազգային գրադարանի տնօրենի 2012 թվականի հուլիսի 18-ի N 90-Ա §-3 հրամանի համաձայն ս/թ. հուլիսի 20-ից սկսվել է գլխավոր գրապահոցի ֆոնդի մատյանային գրանցումը՝ գրադարանում ընդունված սկզբունքով:

Առ 01.01.13 թվականը գրանցվել է 81.149 գիրք, որից հայերեն լեզվով 28.710, ռուսերեն լեզվով 52.439 գիրք: Մատյանային գրանցման աշխատանքները շարունակվում են: Ազգային գրադարանի տնօրենի 2012 թվականի հուլիսի 27-ի N 97-Ա § 2 հրամանի համաձայն վարչական մասնաշենքի նկուղային հարկից գլխավոր գրապահոցի բարձրահարկ մասնաշենքի 8-րդ հարկ է բարձրացվել 55.002 միավոր գրականություն:

Գլխավոր գրապահոցը ակտիվ մասնակցություն է ունեցել հայ գրատպության 500-ամյակի և «Երևանը գրքի համաշխարհային մայրա-

քաղաք-2012» ծրագրի շրջանակներում կազմակերպված բոլոր միջոցառումներին:

Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնի հավաքածուները 2012թ. համալրվել են 7.355 միավոր գրականությամբ, որից 4.729 միավոր գիրք, 1.903 միավորամսագիր, 472 կազմերթ, 60 միավոր նոտային հրատարակություններ, 173 միավոր մանր նյութ և 18 միավոր ոչ գրքային հրատարակություններ:

Ըստ լեզուների ստացված գրականության պատկերը հետևյալն է՝ հայերեն 7.134 միավոր, ռուսերեն՝ 104 միավոր, այլ լեզուներով՝ 92 միավոր, հայատառ թուրքերեն՝ 25 միավոր:

Ստացված գրականությունը համեմատվել է բաժնի քարտարանների հետ, գրանցվել է, դասդասվել և տեղադրվել համապատասխան ֆոնդերում:

Հնատիպ, հազվագյուտ գրականության ենթաբաժնի ֆոնդը 2012 թվականին համալրման բաժնից ստացել է 179 միավոր գրականություն, որից 9 միավոր հայերեն հնատիպ գիրք, 123 միավոր 1801-1850թթ. տպագրված գրքեր, որից հայերեն 3 միավոր (1-ը նոր անուն), ռուսերեն 3 միավոր, հայերեն հազվագյուտ 4 միավոր, որից 3-ը՝ արծաթյա հուշամեդալ, այլալեզու 1 միավոր, հայատառ թուրքերեն՝ 25 միավոր, օտարալեզու հայագիտական՝ 4 միավոր, հայերեն հազվագյուտ 14 միավոր և 7 հուշադրամ: Գրքերը գրանցվել են համապատասխան մատյաններում, տրվել են համակարգչային մուտքագրման և տեղադրվել դարակներում:

Ենթաբաժնի հավաքածուից 73 միավոր գրքի կազմ է վերականգնվել: 5 միավոր տրվել է Մատենադարան՝ լիարժեք վերականգնման նպատակով:

Տարվա ընթացքում կոմպլեկտավորվել և տեղադրվել է 4.800 միավոր գրականություն: Հայկական տպագրության 500-ամյակի շրջանակներում կազմակերպված Հայաստանյան և արտասահմանյան ցուցադրությունների համար տրամադրվել է հայերեն հնատիպ 80 միավոր, 1801-1850թթ. 10 միավոր գիրք և 3 միավոր քարտեզ, որոնք նկարվել են, կշռվել, կազմվել է ապահովագրության և նյութի

մասին արձանագրություն: Բոլոր ուղեկցող փաստաթղթերը թարգմանվել են անգլերեն, հաստատվել են ՀԱԳ տնօրենի և ՀՀ մշակույթի նախարարի կողմից, հանձնվել են պատասխանատուներին՝ ցուցադրելու նպատակով Ցուցադրություններն ավարտվելուց հետո դրանք վերադարձվել են Ազգային գրադարան, ստուգվել մասնագետների կողմից և տեղադրվել գրադարաններում: Ընդհանուր առմամբ ցուցադրման համար տրվել է 301 միավոր գրականություն, որոնց համար կազմվել են երկլեզու լամինացված պիտակներ: Սկանավորվել է 108 միավոր գիրք՝ 35.979 էջով: Արխիվային գրականության հավաքածուն հաշվետու տարում համալրվել է 4.404 միավոր գրականությամբ, որից գիրք 2.390 միավոր, հանդես 1.587 միավոր, լրագիր 419 կազմ, նոտային հրատարակություն 60 միավոր, դիդակտիկ նյութ 1 միավոր: Ստացված գրքերից արխիվային է 2.251 միավորը, հայերեն փոքրածավալ՝ 56-ը, ռուսերեն փոքրածավալ՝ 15 միավորը: 2012թ. վերսկսվել է արխիվային գրականության հավաքածուի ստուգում-տեղաշարժը: Ստուգվել և փոշեհանվել է 23.700 միավոր գիրք, առանձնացվել է 51 միավոր գիրք՝ կազմատուն տանելու համար: Տարվա ընթացքում կոմլեկտավորվել և տեղադրվել է 14.000 միավոր գիրք: 2012թ. ստացված 419 հանդեսները ընթացիկ ստացումներ են, 241 միավորը տեղական հրատարակություններ են, 139 միավորը ստացվել է սփյուռքից և 37 միավորը՝ ԼՂՀ-ից: Լեզվական պատկերը հետևյալն է. 2.341 միավոր հայերեն, 241 միավոր օտարալեզու: Տարվա ընթացքում կոմլեկտավորվել և տեղադրվել է 2.741 միավոր ամսագիր: Կազմատուն է տարվել 111 կազմ, 834 միավոր: Պարբերաբար լրացվում է հանդեսների օջախային և մեկ օրինակների քարտարանը: 2012 թվականին բաժնում ստացվել է 419 կազմ թերթ, որից 241 կազմը տեղական հրատարակություններ են, 139 կազմ ստացվել է սփյուռքից և 37 կազմ՝ ԼՂՀ-ից, առանց տեղի հիշատակության՝ 5 կազմ: Թերթերը գրանցվել են, կոմպլեկտավորվել և տեղադրվել դարակների վրա:

Վերականգնվել են 85 թերթի կոմպլեկտները: Տարվա ընթացքում կոմպլեկտավորվել և տեղադրվել է 1.631 կազմ լրագիր:

Եզակի հավաքածուների ենթաբաժնի հավաքածուն 2012 թվականին համալրվել է 2.772 միավոր գրականությամբ, որից գիրք՝ 2.227 միավոր, ամսագիր՝ 316 միավոր, լրագիր՝ 53 կազմ, մանր նյութեր՝ 173 միավոր և 3 միավոր այլալեզու CD: Գրքերի լեզվական պատկերը հետևյալն է. հայերեն՝ 501, ռուսերեն՝ 497, օտարալեզու՝ 1.229 միավոր: Ամսագրերի լեզվական պատկերն է՝ հայերեն 177, ռուսերեն՝ 52, օտարալեզու՝ 87 միավոր: Լրագրերից հայերեն է 4, ռուսերեն՝ 49 կազմ:

2012 թվականին շարունակվել են հավաքածուների գրքերի մատենագիտական նկարագրության աշխատանքները: Կատարվել է հավաքածուների 17.695 միավոր գրականության ստուգում-տեղաշարժ: Տարվա ընթացքում կոմպլեկտավորվել և տեղադրվել է 3.283 միավոր գրականություն:

Նոտային-երաժշտական գրականության բաժնի հավաքածուն 2012թ. համալրվել է 473 միավոր գրականությամբ, որից 129 միավոր գիրք /72 միավոր հայերեն, 51 միավոր ռուսերեն, 6 միավոր այլալեզու/, 548 նոտային հրատարակություն /113 միավոր հայերեն, 56 միավոր ռուսերեն, 35 միավոր այլալեզու/, 125 էլեկտրոնային կրիչ, 10 միավոր թերթ և 5 միավոր ամսագիր:

Կատարվել է ձայնապնակների ստուգում, արձանագրվել է 10.616 միավոր ձայնապնակ:

Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժնի հավաքածուն 2012 թվականին համալրվել է 1.785 միավոր գրականությամբ, որից 778 գիրք և ալբոմ, 14 ամսագիր, 27 քարտեզ, 17 ատլաս, ազդագիր 275, բացիկ 179, բուկլետ 158, դրոշմանիշ 763, պաստառ 78, հրավիրատոմս 241, օրացույց 73, մանր նյութ 129, վերատպություն 1, լուսանկար և նկար 56, ծրար 239, CD 5, դիդակտիկ նյութ 5, հուշամեդալ 2, կրճաքանչան 3, էջանիշ 9, ծրար 1: Ըստ լեզուների պատկերը հետևյալն է՝ հայերեն՝ 951 միավոր, ռուսերեն և այլ լեզուներով՝ 834 միավոր:

Տպագիր արտադրանքի վերականգնման բաժինը 2012թ. շարունակվել է տպագիր արտադրանքի վերականգնման, ախտահանման, հի-

վանդ, բորբոսնած միավորների հայտնաբերման և բուժման աշխատանքը: Առանձնակի ուշադրություն է ցուցաբերվել մշակութային արժեք ունեցող գրականության նկատմամբ:

2012թ. ընթացքում ախտահանվել է 21.320 թերթ-միավոր, վերականգնվել է 23.930 թերթ-միավոր:

Կատարվել է 14.000 գծամետրի վրա տեղադրված հավաքածուի ստուգում, բորբոսից մաքրվել է 125 միավոր գրականություն: Կատարվել է 389 կաշեկազմ գրքերի կազմի փափկեցում, մշակութային նշանակություն ունեցող 73 միավոր գրքի վերականգնում:

## **ԸՆԹԵՐԳՈՂՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ**

Հաշվետու տարում գրադարանի ընթերցողները սպասարկվել են գիտաշխատողների, ընդհանուր, ընթացիկ մամուլի, ՄԱԿ-ի ավանդապահ գրականության, սեղմագրերի և ատենախոսությունների, նոտային-երաժշտական գրականության, կերպարվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների, հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության, տեղեկատու-մատենագիտական և գրադարանագիտական գրականության մասնագիտացված ընթերցասրահներում, տեսողության խնդիրներ ունեցողների համար նախատեսված «Արև» սրահում, ինտերնետի ազատ մուտքի սրահում:

Գրադարանում ընթերցողների գրանցումն ու հաշվառումը կատարվում են էլեկտրոնային տարբերակով:

Ընթերցողական տոմսերի փոխանակման աշխատանքները շարունակվում են:

2012 թվականի ընթացքում ընթերցողների միասնական քարտարանում գրանցվել է 3.563 մարդ, որից վերագրանցվել է 367-ը: 3.196 ընթերցող առաջին անգամ ընթերցողական տոմս է ստացել: Միասնական քարտարանում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված է 16.102 ընթերցող:

Գրադարանի միասնական քարտարանում գրանցված ընթերցողների կազմի 71%-ը սովորողներ են:

Ընթերցողների կազմի 73%-ը իզական սեռի ներկայացուցիչներ են:

### ***Ընթերցողների հաճախումները***

Հաշվետու տարում գրադարանի ընթերցողների հաճախումների թիվը կազմել է **270.879**, որից ըստ բաժինների՝

Սպասարկման բաժին	257.677
Արվեստի գրակ. և ոչ գրքային հրատարակութ.	1.150
Նոտային-երաժշտական գրականության	1.068
Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության	3.103
Տեղեկատու-մատենագիտական գրակ.	786
Ինտերնետ սրահ	1.150
Բաժնույթների բաժին	5.945

### ***Գրքատացքը***

2012 թվականին գրադարանի գրքատացքը կազմել է **1.564.073** միավոր գրականություն: Ըստ առանձին ընթերցասարահների գրքատացքի պատկերը հետևյալն է.

Սպասարկման բաժին	1.514.559
	միավոր
Արվեստի գրակ. և ոչ գրքային հրատարակութ.	9.100
	միավոր
Նոտային-երաժշտական գրականության	1.642
	միավոր
Տեղեկատու-մատենագիտական գրականության	3.710
	միավոր

Յնատիպ, հազվագյուտ և արխիվային գրակ.	6.674 միավոր
Ինտերնետի ազատ մուտքի սրահ	14.098 միավոր
Բաժնույթների բաժին	14.290 միավոր

***Գրքատացքի պատկերը ըստ լեզուների հետևյալն է.***

Հայերեն	988.317 միավոր	կամ 63, 2%
Ռուսերեն	460.021 միավոր	կամ 29,4 %
Այլ լեզուներով	115.735 միավոր	կամ 7,3 %

***Գրականության տացքը ըստ գիտության ճյուղերի հետևյալ պատկերն ունի.***

Հասարակական - քաղաքական գրակ.	421.409 միավոր	(26,9%)
Բնական գիտություններ, բժշկություն	206.871 միավոր	(13,2%)
Տեխնիկական, գյուղատնտ. և տնտեսագիտ.	380.293 միավոր	(24,3%)
Մշակույթ, ֆիզկուլտուրա, սպորտ	235.813 միավոր	(15,%)
Բանասիրություն, գեղարվեստական գրակ.	319.687 միավոր	(20,4%)



Սպասարկված գրականության մեծ մասը՝ 26,9%-ը՝ հասարակական-քաղաքական գրականություն է:

Գրադարանի հաճախումների 95,1%-ը կազմում են սպասարկման բաժնի ընթերցասրահների հաճախումները:

Սպասարկման բաժնի հաճախումները՝ 257.677 ըստ առանձին ընթերցասրահների՝

Գիտաշխատողների ընթերցասրահ	81.124
Ընդհանուր ընթերցասրահ	116.362
Ընթացիկ մամուլի ընթերցասրահ	54.252
ՄԱԿ-ի ավանդապահ գրականության ընթերցասրահ	1.149
Իրավաբանական տեղեկատվության կենտրոն	185
«Արև» ընթերցասրահ	176
Ատենախոսությունների և սեղմագրերի ընթերցասրահ	4.429

Սպասարկման բաժնի գրքատացքը հաշվետու տարում կազմել է 1.515.195 միավոր գրականություն, ինչը կազմում է գրադարանի ընդհանուր տացքի 95%-ը:

Ըստ առանձին ընթերցասրահների տացքի պատկերը հետևյալն է՝

Գիտաշխատողների ընթերցասրահ	459.527 միավոր
Ընդհանուր ընթերցասրահ	639.957 միավոր
Ընթացիկ մամուլի ընթերցասրահ	399.847 միավոր

ՄԱԿ-ի գրականության սրահ	7.409 միավոր
Իրավաբանական տեղեկատվության կենտրոն «Արև» ընթերցասրահ	498 միավոր 203միավոր
Ատենախոսութ. և սեղմագրերի ընթերցասրահ	7.754/433 միավոր

Հաշվետու տարում տացքակետերի միջոցով գլխավոր գրապահոց է ուղարկվել 107.398 պատվեր: Բավարարվել է 92.105 պատվեր, մերժվել է 15.293-ը, որից 12.670-ը զբաղված է եղել ընթերցասրահներում, և ընթերցողները գրականությունը տեղում կարդալու հնարավորություն են ունեցել: 2.506 գրքի պատվեր մեկ օրինակ լինելու պատճառով սպասարկվել է հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնում: 80 պատվիրաթերթիկ մերժվել է գրադարանում չլինելու պատճառով: Վերջին մերժումները մեծ մասամբ վերաբերում են այն անսագրերին, որոնք գրադարանը չի ստացել կամ հատորային հրատարակություններին, որոնց այս կամ այն հատորը կամ պրակը գրադարանում բացակայում է, և ընթերցողը պատվիրել է առանց գրացուցակից օգտվելու:

Գրադարանում պարբերաբար կատարվում է մերժումների վերլուծություն, որի նպատակը առավել մեծ պահանջարկ ունեցող գրքերի երկրորդ օրինակի ձեռքբերումն է:

2012 թվականի ընթացքում կատալոգների ենթաբաժնում ընթերցողներից ընդունվել է 83.135 պատվիրաթերթիկ, կատարվել է 8.766 պատվերների մատենագիտական տվյալների ճշտում ծառայողական գրացուցակներում: Տարվա ընթացքում սպասարկման բաժնի բոլոր օղակներում ընթերցողներին տրվել է 27.850 բանավոր տեղեկանք, 3.795 ընթերցողի տրվել է խորհրդատվություն գրացուցակի մոտ: ALEPH ծրագրի որոնողական համակարգից օգտվել է 9.321 ընթերցող:

## ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

2012 թվականին գրադարանի բոլոր բաժնույթներից օգտվել է 774 բաժանորդ, որից՝

Միջգրադարանային	94
Անհատական	317
Ներքին	308/55

Հաշվետու տարվա ընթացքում գրադարանի բոլոր բաժանորդներին տրվել է 10.559 միավոր գրականություն:

Միջգրադարանային բաժնույթի 94 բաժանորդներին տրվել է 1.243 միավոր գրականություն: Բաժանորդների թվում են 17 մարզային և համայնքային գրադարաններ:

2012 թվականին ևս շարունակվել են պայմանագրերի կնքման աշխատանքները Հայաստանի բուհական գրադարանների հետ: Նոր պայմանագրեր են կնքվել Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի և Վ. Բոյուսովի անվ. լեզվաբանական համալսարանի, «Մաքուր երկաթ» գործարանի, Մայր Թերեզայի անվ. բժշկական համալսարանի, Հյուսիսային համալսարանի, «Հայբուսակ» համալսարանի, «Գլաձոր» համալսարանի և այլ հաստատությունների հետ: Այդ պայմանագրերի արդյունքում գրադարան է նուտքագրվել 487.000 դրամ:

Միջազգային միջգրադարանային բաժնույթով ԱՊՀ երկրներ է ուղարկվել 73 պատվեր, որից բավարարվել է 38-ը, 35 պատվեր մերժվել է:

ԱՊՀ գրադարաններից ստացված գրականության դիմաց հաշվապահություն է մուծվել 243.129 դրամ:

2012թ. ավելի են ամրապնդվել կապերը Ռուսաստանի պետական գրադարանի հետ, որտեղից ՀԱԳ-ը 2 պատվեր է ստացել: Պատվերներ են ստացվել նաև ՌԴ Պատմության գրադարանից, Ջալքբուրգի համալսարանի գրադարանից, Իսրայելից: 5 պատվերները բավարարվել են:

Անհատական բաժնույթով 317 բաժանորդներին տարվա ընթացքում տրվել է 2.488 միավոր գրականություն և հաշվապահություն է նուժվել 528.500 դրամ:

Ներքին բաժնույթի 308 բաժանորդներին 2012թ. տրվել է 10.559 միավոր գրականություն: Մեկ օրինակ լինելու պատճառով մերժված գրքերը ցուցակագրվել են և հանձնվել համալրման բաժին՝ ևս մեկ օրինակ ձեռք բերելու համար:

2012 թվականին ՀԱԳ-ի միջգրադարանային և անհատական բաժնույթներով գրադարանի հաշվապահություն է նուժվել ընդհանուր հաշվով 1.274.229 դրամ գումար:

## **ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Հայագիտական և երկրագիտական քարտարանների ենթաբաժնում քարտագրվում են Հայաստանի պարբերական մամուլում տպագրված՝ հայ ժողովրդի և Հայաստանի մասին գիտության բոլոր բնագավառներին վերաբերող հրապարակումները, վարվում են անձնագրավորված քարտարաններ և կատարվում է մատենագիտական սպասարկում: Ենթաբաժնում կազմվում են թեմատիկ, պարբերական մամուլի բովանդակության մատենագիտություններ և կենսամատենագիտություններ:

Տարվա ընթացքում ուսումնասիրվել է 15.699 միավոր թերթ, 407 միավոր ամսագիր և 437 միավոր գիրք: Կազմվել է հոդվածների նկարագրության 76.173 քարտ, ինդեքսավորվել է նույնքան քարտ, կրկնակվել է 5.999 քարտ, դասավորվել և տեղադրվել է 76.173 քարտ: «Պերսոնալիա» քարտարանի համար նկարագրվել է 6.977 քարտ: Հետադարձ համալրմամբ կազմվել է 4.252 քարտ: Խմբագրվել է քարտարանների 180 արկղ, վերադասավորվել է 7.183 քարտ:

2012 թ. շարունակվել են աշխատանքները «Հայկական հարց և հայոց ցեղասպանություն», «Եղիշե Չարենց» մատենագիտությունների խմբագրման և լրացման ուղղությամբ: Խմբագրվել են «Տիգրան Սանսուրյան» կենսամատենագիտության քարտերը: Կազմվել է ՀԱԳ-ի

2004-2012թթ. հրատարակությունների ցանկ Ռուսաստանի պետական գրադարանի կայքի՝ ԱՊՅ երկրների ազգային գրադարանների հրատարակությունների շտեմարանում տեղադրելու համար:

Հայ գրքի մատենագիտության և սփյուռքահայ մամուլի ենթաբաժնում տարվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները: Ավարտվել է 1921-1940թթ. թարգմանական գրականության մատենագիտության օժանդակ ցանկերի կազմումը (վերնագրային, անձնանունների, տպագրության վայրերի և տպարանների): Օժանդակ ցանկերի կազմման ընթացքում գրադարանի հավաքածուներում գրքերի հետ համեմատվել և ճշտվել է 98 քարտ: «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության համար աշխատանք է կատարվել ԳԱԱ հիմնարար, ԵՊՀ-ի, ԽՍԿ-Ապոր անվ. գրադարաններում Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում:

Տարվա ընթացքում ուսումնասիրվել է սփյուռքում հրատարակվող 2.731 միավոր թերթ և 97 միավոր ամսագիր: Նկարագրվել է 15.309 հոդված, ինդեքսավորվել է 15.309 քարտ, կրկնակվել է 1.090 քարտ: Քարտարաններում տեղադրվել է 15.960 քարտ: Խմբագրվել է քարտարանի 12 արկղ:

Գրադարանագիտության և գրադարանային աշխատանքների վերլուծության ենթաբաժնում տարվա ընթացքում ստացվել է 12 միավոր գիրք, 55 միավոր հանդես, 11 միավոր թերթ: Ընթերցողների թիվը կազմել է 97, հաճախումը՝ 154, ընթերցողներին տրվել է 439 միավոր գրականություն, նկարագրվել է 438 հոդված, տեղադրվել է 438 քարտ:

Կազմվել է «Հիշարժան տարեթվեր-2013» օրացույցը, «Հայաստանի գրադարանները 2011թ.» վիճակագրական վերլուծությունը: Տրվել են գրավոր տեղեկանքներ, անց են կացվել մասնագիտական գրականության և մամուլի տեսություններ:

Ֆոնդի թիվը առ 01. 01. 2013թ. կազմել է 2.219 միավոր գրականություն:

Տեղեկատու մատենագիտության ենթաբաժնում 2012 թ. ընթացքում ուսումնասիրվել է 16.263 թերթ, 660 ամսագիր: Կազմվել է հոդվածների նկարագրության 11.728 քարտ, ինդեքսավորվել է 11.728 քարտ:

Անհատական քարտարանի համար կազմվել է 867 քարտ և տեղադրվել է քարտարանում: Վերադասավորվել և խմբագրվել է 100 քարտ: Խմբագրվել է քարտարանների 3 արկղ: Հետադարձ համալրումով կազմվել է 1.083 քարտ:

Տեղեկատու գրականության ընթերցասրահի ֆոնդը առ 01.01.2013 թ. կազմել է 15.893 միավոր գրականություն, որից գիրք 3.187 մ., տարեգիր 5.437 միավոր, տեղեկագիր 3.086 միավոր:

Ընթերցողներին 2012թ. ընթացքում տրվել է 3.271 միավոր գրականություն:

Հաշվետու տարում բաժինը հրատարակման է պատրաստել «Նոր գրքեր» տեղեկատու ցանկերը հայերեն և այլ լեզուներով:

Համակարգչային ընթերցասրահի ֆոնդը առ 01.01.2013 թ. կազմել է 4.183 միավոր էլեկտրոնային կրիչ, որից CD - 1.425, DVD - 174, EBSCO - 292, Floppy - 31, VHS - 242 ձայներիզ - 185, Flesh - 2, Pro Quest - 1.830 միավոր:

Համակարգչային ընթերցասրահի ընթերցողների թիվը կազմել է 44, հաճախումը՝ 86, տացքը՝ 85 միավոր գրականություն:

Կատարվել է մատենագիտական տեքստի շարվածք՝ 305.769 միջ, մատենագիտական տեքստի համակարգչային սրբագրում՝ 305.769 միջ, էջերի ձևավորում՝ 2.123 էջ, տեքստի շարվածք՝ 177.039 միջ, տեքստի համակարգչային սրբագրում՝ 238.976 միջ, աղյուսակի ձևավորում՝ 156 էջ:

Նոտային-երաժշտական գրականության բաժնում շարունակվել են աշխատանքները Տիգրան Մանսուրյանի կենսամատենագիտության կազմման ուղղությամբ:

Մատենագիտական աշխատանքներ են կատարվել նաև Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժնում: Նկարագրվել է 3.550 հոդված, որից 2.250-ը ընթացիկ, 1.300-ը՝ հետադարձ, խմբագրվել է քարտարանի 2 արկղ: Նկարագրվել է 1.087 հոդված

առարկայական և 508 հողված՝ ժամանակակից նկարիչների քարտա-  
րանների համար: Լրացվել են Հ. Կոջոյանի, Պ. Ադամյանի, Գր. Խան-  
ջյանի քարտարանները: Տարվա ընթացքում կատարվել է «Վարդես  
Սուրենյանց» կենսամատենագիտության էլեկտրոնային շարվածքը:  
Կատարվել է 102 նկարչի հեղինակավոր գրառում: Նոտային-  
երաժշտական բաժնում մշակվել է 200 հողված, քարտագրվել, քար-  
տերը ինդեքսավորվել ու տեղադրվել քարտարաններում: Խմբագրվել  
է քարտարանի 13 արկղ:

Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնի եզա-  
կի հավաքածուների ենթաբաժնում 2012 թ. ևս շարունակվել են «Հայ  
երգարանները» մատենագիտության կազմման աշխատանքները:

2012 թվականին գրադարանի ընթերցողներին տրվել են 19 գրավոր և  
31.451 բանավոր մատենագիտական տեղեկանքներ: Տրված բանավոր  
տեղեկանքների պատկերը ըստ առանձին բաժինների հետևյալն է՝  
մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժին - 660,  
արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների - 1. 050,  
սպասարկման բաժին - 27.850, նոտային-երաժշտական գրականության  
բաժին - 400, գրականության մշակման և կատալոգների կազմակերպման  
բաժին - 1.348, հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության  
բաժին - 143: Մատենագիտական 7.210 խորհրդատվություններ են անց-  
կացվել. մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժին -  
1.780, արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների  
բաժին - 3.795, սպասարկման բաժին - 1.780, նոտային-երաժշտական  
գրականության բաժին - 910, գրականության մշակման և կատալոգների  
կազմակերպման բաժին - 325:

Մատենագիտական տեսություններ են անցկացվել. մատենագիտու-  
թյան և գիտական հետազոտությունների բաժին - 1, արվեստի գրակա-  
նության և ոչ գրքային հրատարակությունների բաժին - 2, ընդամենը՝ 3:

## ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2012թ. Ազգային գրադարանը կազմակերպել է 80 միջոցառում: Դրանցից 62-ը անց է կացվել գրադարանում, 18-ը՝ Երևանյան և մարզային մշակութային կենտրոններում: Միջոցառումները լուսաբանվել են հայաստանյան և սփյուռքի զանգվածային լրատվամիջոցներում՝ էլեկտրոնային կայքերում /76 արձագանք/, պարբերական մամուլում /67 արձագանք/, հեռուստատեսությամբ /14 արձագանք/:

Կազմակերպված միջոցառումներն ունեցել են տարբեր բնույթ՝ հայ գրատպության 500-ամյակին և Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելուն նվիրված հոբելյանական ցերեկույթներ, գիտաժողովներ, գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ, ֆիլմերի ցուցադրություն:

Իրականացվել են սուբսիդիայով նախատեսված բոլոր միջոցառումները՝ Ազգային գրադարանային շաբաթ, Գրադարանավարի օր, Գրադարանային երեկո /«Հանդիպման վայրը՝ գրադարան», Թարգմանչաց տոն, Մայրենի լեզվի միջազգային օր, Գրքի և հեղինակային իրավունքի միջազգային օր, «Հիշատակ Նահատակաց» /Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված/, «Կարեն Դեմիրճյան-80», «Լուսինե Զաքարյան-75», «Գալյա Նովենց-75», «Օհան Դուրյան-90», «Տիգրան Զուխաջյան-175»:

Տարվա ընթացքում հայ գրատպության 500-ամյակի շրջանակներում առավել ուշագրավ միջոցառումներից են «Գաֆեճյան» արվեստի կենտրոնում անցկացված "ArmBookExpo" ցուցահանդեսը, Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Յեֆֆերնի, Կոնգրեսի գրադարանի և այլ արտասահմանյան հյուրերի այցը Ազգային գրադարան, «Գուտենբերգից մինչև ինտերնետ. անավարտ պատմություն գրադարանների համար» միջազգային գիտաժողովը Հայաստանի ամերիկյան համալսարանում, «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովը, «Գրության, ընթեր-



ցանության և տպագրության նոր կիրառությունը թվանշային գրադարանում» թեմայով կլոր սեղանը Ազգային գրադարանում:

Ազգային գրադարանի օրվա առթիվ բաժինների կողմից կազմակերպվել են ցուցադրություններ:

2012թ. ընթացքում կազմակերպվել են թեմատիկ միջոցառումներ՝ Հայկական բանակի օրվան նվիրված՝ Իրավաբանների և հոգեբանների միջազգային ասոցիացիայի կողմից, Մայրենի լեզվի օրվան նվիրված ցերեկույթ, Իրավաբանների և հոգեբանների միջազգային ասոցիացիայի կողմից կատարած հարցումների արդյունքում 2011թ. լավագույնը ճանաչված հեռուստատեսային ծրագրերի և հաղորդաչափերի պարզևատրման արարողություն:

2012թ. անց են կացվել նաև շնորհանդեսներ

«Գրանիշ» գրական ակումբի էլ.կայքի, «ԳՐԱՆԻՇ» գրական հանդեսի, «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի Բ հատորի, Լյուդվիգ Դուրյան. «Այսքանը իմ կյանքից» գրքի, Աղաբեկ Խաչատրյանի «Ազատամարտիկի և ֆիդայու բարոյահոգեբանական առանձնահատկությունների երկու զուգահեռ» գրքի, «Քաջարի», Խաչիկ Խաչերի «42, 20-րդ դարի պատմվածք» ժողովածուի, Նատալյա Միխայլովայի “Деньги. Пушкин. Деньги”, Վլադիմիր Թաթոսովի “А мне летать охота”, Էդիկ Բաղդասարյանի «Իրանահայ համայնքի ամբողջական պատմությունը» 10-հատորյա աշխատության, Նիկողոս Սարաֆյանի «Հսկում», Սամվել Շահինյանի գիտական մենագրությունների, «Արահետ» ամսագրի, Մանուկ Մուրադյանի «Ուսուր բեկ» գրքի՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ համատեղ: 2012թ. անցկացված հոբելյանական միջոցառումներն են Հայկական բանակ-20, Դերենիկ Դեմիրճյան-135, Հովսեփ Օրբելի-125, Ռաֆայել Իշխանյան-90, Մ.Մաշտոց-1650, Սայաթ-Նովա-300, Կարեն Դեմիրճյան-80, Լուսինե Զաքարյան-75, Էսպերանտո-125, Օհան Դուրյան-90, Անանիա Շիրակացի-1400: Հաջողությամբ են անցկացվել նաև ցուցահանդեսները՝ «Հայ գիրքը Իտալիայում», «Հայ գիրքը Անթիլիասում», «Հայ գիրքը Նոր Զուղայում», «Հայ գիրքը Եփպտոսում», «Հայ գիրքը Կոստանդնուպոլսում», «Հայ գիրքը Ռուսաստանում», «Երևանը գրքերում և

պարբերական մամուլում», «Հայ գրքի դարավոր ուղին», «Տպագրությունը Շուշիում», «Հայ հնատիպ գիրքը Ֆրանսիայում», «Հայ գիրքը Ամստերդամում», «Ստեփանոս Նազարյանց-200», Հովսեփ Օրբելու 125-ամյակներին նվիրված ցուցադրությունը, նոր ստացված գրադարանագիտական մամուլի տեսությունը, ՀԱԳ հրատարակությունների ցուցադրությունը, աշխարհի երկրների վաղ շրջանի գրքերի ցուցադրությունը, ՀՀ մարզերին նվիրված ցուցադրությունը ՀԱԳ շրջիկ գրադարանում, Հայերենի պատկերազարդ տառատեսակների ցուցադրությունը, Հայ-գերմանական առնչություններին նվիրված գրականության ցուցադրությունը, ՀԱԳ գերմաներեն հնատիպ գրականության ցուցադրություն:

Տարվա ընթացքում կազմակերպված հանդիպումները նպաստել են Ազգային գրադարանի կապերի ամրապնդմանը հայաստանյան և սփյուռքահայ գործիչների հետ:

Մշակութային օջախներում հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջոցառումներից են՝ մարտի 3-4-ը Նկարիչների միությունում անցկացված «ART EXPO-2012»-ցուցահանդեսը, որտեղ Հայաստանի ազգային գրադարանը ներկայացավ «ՀՀ մարզերը» խորագրով գրականության ցուցադրությամբ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ գրադարանի հնատիպ գրքերի ցուցադրությունը, հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջոցառումը Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցում:

Շրջիկ գրադարանով կատարվել են այցեր Արմավիրի մարզի Մերձավան համայնքի դպրոց, Նորապատ, Բամբակաշատ, Փշատավան, Ալաշկերտ, Աղավնատուն, Ջարթոնք, Արևիկ, Շենիք համայնքների գրադարաններ, Արագածոտնի մարզի «Կոշ» քրեակատարողական հիմնարկ, Երևանի թիվ 90 միջնակարգ դպրոց, Արագածոտնի մարզի Աշտարակի մարզային, Օշականի համայնքային գրադարաններ, Կոտայքի մարզի Քանաքեռավանի արվեստի դպրոց, Կոտայքի մարզի Ծաղկաձորի քաղաքային գրադարան, Հովսեփ Օրբելի եղբայրների տուն-թանգարան, Աբովյանի քաղաքային, Հրազդանի մարզային գրադարաններ, Արարատի մարզի Արարատի, Մասիսի քաղաքային գրադարաններ, Գեղարքունիքի մարզի մարզային գրադարան, Գեղար-

քունիք, Սարուխան, Կարմիր, Գանձակ, Այրիվանք, Լանջաղբյուր, Նորատուս, Ծովագարդ, Բերկունք, Լճափ համայնքների, Գավառի քաղաքային գրադարաններ, Լոռվա մարզի Ստեփանավանի կենտրոնական գրադարան:

Միջոցառումների ժամանակ բաժինը ներկայացրել է թեմատիկ ցուցադրություններ՝ 1889 միավոր գիրք, 12 միավոր թերթ, 216 միավոր ամսագիր, 10 լուսանկար, 46 ասույթներ:

Միջոցառումների մասին նախապես տեղեկացվել են լրատվամիջոցները: Միջոցառումները լուսաբանել են հայկական հեռուստառադիոընկերությունները, մամուլը, լրատվական գործակալությունները: Բոլոր միջոցառումների մասին ինֆորմացիաները տպագրվել են գրադարանի «Հոգևոր հայրենիք» ամսաթերթում: Միջոցառումների մասին նախապես կազմվել է մամուլի հաղորդագրություն և ուղարկվել լրատվամիջոցներին: Միջոցառումներին արձագանքել են նաև սփյուռքահայ թերթերը:

Բաժինը կազմում է «ԶԼՄ արձագանքներ» տարեգիրքը, որտեղ ընդգրկվում են տարվա ընթացքում զանգվածային լրատվամիջոցներով տարածվող այն նյութերը, որոնք վերաբերում են Հայաստանի ազգային գրադարանին:

Հրատարակվում է «Հոգևոր հայրենիք» ամսաթերթը: Տարվա ընթացքում հրատարակվել է թերթի 11 համար՝ նույնբեր-դեկտեմբերինը՝ միացյալ: Հարցազրույցներ են տպագրվել հայաստանյան և Հայաստան այցելած սփյուռքահայ գործիչների հետ, տրվել են նոր հրատարակված գրքերի գրախոսություններ, հայաստանյան և սփյուռքի մշակութային կյանքին վերաբերող իրադարձությունների մեկնաբանություններ: «Հայրենի եզերք», «Ձավախքն է կանչում», «Գրադարանի մարդիկ», «Անցյալի էջերից», «Հայ գրատպություն-400», «Հայ գրատպություն-500», «Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք-2012» խորագրերին ավելացել են «Գրական էջ», «Մեր բարերարները», «Թվային գրադարաններ» խորագրերը: Թերթն ունի 220 բաժանորդ, որից 120-ը Ազգային գրադարանի աշխատակիցներ են, իսկ 100-ը Երևանի և մարզերի մշակութային կենտրոններ՝ մեկ և ավելի օրինակներով:

## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու 2012 թվականին շարունակվել են «Հայաստանի գրադարանների միասնական ավտոմատացված ցանց» ծրագրի մուտքագրման, ծրագրային ապահովման և կոորդինացման աշխատանքները:

Հաշվետու տարում կատարվել է 35.101 անուն և 115.833 միավոր գրականության մուտքագրում:

Ընդհանուր բազայի տարեկան մուտքերը կազմել են 101.100 անուն և 376.523 միավոր գրականություն:

Ազգային գրադարանում են իրագործվում 10 գրադարանների նրբաթել կողերի տպագրման աշխատանքները: Հաշվետու տարում կատարվել է 462.000 պիտակի տպագրում: 2012թ. գրադարանի կայքէջի Հայ հնատիպ գրքերի տպարանների էլեկտրոնային շտեմարանում տեղադրվել են տեղեկություններ 33 տպարանների մասին, 24 միավոր աշխարհագրական քարտեզի, 155 միավոր հնատիպ և 160 միավոր հայագիտական գրքի թվանշացված տարբերակները: Կայքի այցելությունները գրանցող պատուհանում արձանագրվում են կայքից օգտվողների թիվն ու աշխարհագրությունը: Կայքը զարգացնելու ու կատարելագործելու ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Ընդլայնվել է գրադարանի ներքին ցանցը:

Տարվա ընթացքում կատարվել է 2.865.300 նիշ շարվածք, 3.220.500 նիշ շարվածքի ձևավորում, 8.398.500 նիշ շարվածքի համակարգչային սրբագրում:

Կատարվել է հետևյալ գրքերի էջերի մակետավորում՝ «Նոր գրքեր 2011» - 2-րդ կիսամյակ (հայերեն, ռուսերեն լեզուներով), «Նոր գրքեր 2011» օտար լեզուներով, «Նոր գրքեր 2012» - 1-ին կիսամյակ (հայերեն), «Տարեգիրք. Ձանգվածային լրատվամիջոցների արձագանքները» - 2010թ., «Տարեգիրք. Ձանգվածային լրատվամիջոցների արձագանքները» - 2009թ., «Գրադարանի 2012թ. աշխատանքային պլանը», «Գրադարանի 2011թ. կատարած աշխատանքների հաշվետվությունը», «Հիշարժան տարեթվեր 2013» օրացույցը, «Հայաստանի գրադարանները 2011թ.» վիճակագրական վերլուծությունը, «Հոգևոր

Չայրենիք» ամսաթերթի 6 համարները: Ընդամենը՝ 1054 էջ 80 տպագրական մամուլ:

Թվայնացվել է 315 միավոր գիրք՝ 79.389 էջ, որից մշակվել է 10.120 էջ:

### **ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Հաշվետու ժամանակաշրջանում տպագրվել են «Հայաստանի գրադարանները 2011թ.» աշխատանքների վիճակագրական վերլուծությունը /60 միավոր/, «Նոր գրքեր» 2011թ. հայերեն կիսամյա ցանկը /30 միավոր/, «Հիշարժան տարեթվեր - 2013» օրացույցը:

Տպագրվել են Հայաստանի ազգային գրադարանի և գրադարանային ասոցիացիայի «Հոգևոր Չայրենիք» պաշտոնաթերթի վերջին չորս համարները:

Տարվա ընթացքում կազմվել է 7.064 միավոր գրականություն, որից՝ 3.356 գիրք, 2.826 կազմ թերթ, 882 ամսագիր, 150 մատյան:

### **ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ**

Հայաստանի ազգային գրադարանում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատում է 363 մարդ:

Գրադարանային աշխատողներից 318-ը կամ 87%-ը կանայք են:

Գրադարանային բաժինների աշխատողների ցուցանիշները ըստ կրթության հետևյալ պատկերն ունեն

Բարձրագույն գրադարանային կրթություն	37(10,2%)
Բարձրագույն ոչ գրադարանային կրթություն	213 (58,8%)
Միջին մասնագիտական կրթություն	25(7%)
Միջին ոչ մասնագիտական կրթություն	53 (14,7%)
Միջնակարգ կրթություն	35 (9,3%)

Աշխատողների մեծ մասը՝ 250 մարդ, կամ աշխատակազմի 68,8%-ը ունի բարձրագույն կրթություն:

Գրադարանի աշխատողների ցուցանիշները ըստ աշխատանքային ստաժի հետևյալ պատկերն ունեն

1-5 տարի	150 մարդ (41%)
6-10 տարի	90 մարդ (25%)
10-ից ավելի	123 մարդ (34%)

2012թ. գրադարանի աշխատակիցները նվիրված աշխատանքի համար արժանացել են տարբեր պարգևների. 14-ը «Աշխատանքային հոբեյանի» պատվոգրով, 13-ը՝ ՀՀ մշակույթի նախարարության շնորհակալագրով, 1-ը՝ նախարարության պատվոգրով, 1-ը՝ ՀՀ նախագահի շնորհակալագրով:

**ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՐՔԱՏԱՑՔԸ  
ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ 2012Թ.**

<b>Բաժինները</b>	<b>Հաճախումը</b>		<b>Գրքատացքը</b>	
	Նախա-տեսվել է	Կատար-վել է	Նախա-տեսվել է	Կատար-վել է
Սպասարկման	257.500	257.677	1.444.540	1.515.195
Նոտային-երաժշտական գրականության	2.500	1.068	3.500	1.642
Արվեստի գրակ. և ոչ գրքային հրատարակու-թյունների	2.100	1.150	17.000	9.100
Մատենագիտության և գիտական հետազոտ. բաժին	1.330	786	11.360	3.710
Հնատիպ, հազվագյուտ և արխիվ. գրակ.	2.500	3.103	7.000	6.674
Էլեկտրոնային սպա-սարկում	2.040	1.150	7.150	13.462
Բաժնույթների	3.900	5.945	17.450	14.290
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>271.870</b>	<b>270.879</b>	<b>1.508.000</b>	<b>1.564.073</b>

**2012Թ. ԱՏԱՑՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ՀՐԱՏԱՐԱՎԿՉՎԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ**

N	Հրատարակչական տեսակները	2012թ.	
		Նախատեսվել է	Կատարվել է
1	Գիրք	24.677	22.762
2	Հանդես	13.800	10.596
3	Լրագիր	1.850	2.033
4	Շարունակվող հրատ.-ներ	100	271
5	Քարտեզ	40	27
6	Նոտա	250	104
7	Ձայնապնակ	-	-
8	Խմբային մշակման նյութեր	1.000	1.140
9	Սեղմագիր	6.000	5.408
10	Ատենախոսություն	450	576
11	DVD, CD (տեսաերիզ)	300	244
12	Կերպարվեստի նյութեր	515	339
13	Ատլաս, դրոշ	15/	23/
14	Ձայներիզ	/20	-/53
15	Նամականիշ/ բուկլետ	300/200	483/254
16	Հրավիրատոմս	275	203
17	Օրացույց	110	74
18	Պլակատ/վերատպ.	50/-	65/-
19	Բացիկ/ծրար	180/120	239/2
20	Լուսանկար / նկար	25/48	-/26
21	Ազդագիր/էջանշան	75/-	25/11
22	Դրամ/կրճքանշան	-	-/3/6
23	Դիդակտիկ նյութ	-	4
	<b>Ընդամենը՝</b>	<b>50.400</b>	<b>44.510</b>



**ԳՈՐԾՈՂ ՖՈՆԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐԺԸ ԸՍՏ ԼԵԶՈՒՆԵՐԻ 2012Թ.**

N		Ընդամենը	Որից		
			Հայերեն	Ռուսերեն	Այլ լեզուներ
1	Եղել է առ 1.01.2012թ.	6.575.590	1.561.846	4.416.523	597.221
2	Մուտք է եղել 2012թ.	37.545	17.334	9.514	10.697
3	Ելք է եղել 2012թ.	-	-	-	-
4	Կազմում է առ.1.01.2013թ.	6.613.135	1.579.180	4.426.037	607.918

**ԳՐԱԴԱՐԱՆԻ ՖՈՆԴԵՐԸ 2012 Թ.**

N		Կազմել է առ 1.01.2012թ.	Ստացվել է 2012թ.	Դուրս է գրվել 2012թ.	Կազմում է առ 1.01.2013թ.
1	Գործող ֆոնդեր	6.575.590	37.545	-	6.575.590
2	Պահուստային ֆոնդ	115.696	2.567	45	115.696
3	Գրքափոխանակ. ֆոնդ	110.871	7.796+6230* =14.026	9.480	115.417
4	Ընդամենը	6.802.157	54.138	9.628	6.846.667

**6230\* ֆոնդի վերստուգման արդյունքում 6230 միավոր ավելացել է**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐՔԱՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺԻ  
2012Թ. ԱՐՏԱՍԱՀՅԱՆՅԱՆ ԳՐՔԱՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ  
ԱՂՅՈՒՍԱԿ**

<b>N</b>	<b>Գրադարաններ, կազմակերպություններ, անհատներ</b>	<b>Ստացված</b>	<b>Ուղարկված</b>
1.	ԱՄՆ, Կոգրեսի գրադարան	54	55
2.	ԱՄՆ, Ռիչարդ Ջովհաննիսյան	6	-
3.	ԱՄՆ, Վազգեն Ղուկասյան	4	1
4.	ԱՄՆ, Լևոն Խաչատրյան	2	-
5.	ԱՄՆ «Համայնապատկեր» ամսագրի գլխ. խմբ.՝ Ս. Գյոդակյան		1
6.	ԱՄՆ «World Bank. Research Digest», «Young Aduly Library Services», «American libraries», «Science»	9	-
7.	ԱՄՆ, Կոնգրեսի միություն/ Infirmation Technology and libraries	1	-
8.	Ավստրալիա «Լույս» հանդես	2	-
9.	Բուլղարիա, Սբ. Կիրիլ և Մեֆոդիի անվան Ազգային գրադարան	-	1
10.	Բրատսկ քաղաքի գրադարանային կենտրոնացված համակարգ	-	29
11.	Բեռլինի Պետական գրադարան	-	8 ամս.
12.	Բելոռուսի ազգային գրադարան	44/1 CD	4
13.	Vietnam «Vietnam pictorial»	4	-
14.	Վրաստանի ազգային գրադարան		1
15.	Վենետիկ Մխիթարյան Միաբանություն	-	1
16.	Գերմանիա «Oesterreiche National Bibliothek»	1	-
17.	Եգիպտոս «Ջահակիր» հանդես, Տեղեկատու	5	-

18.	Եգիպտոս, Սուրեն Բայրամյան	2	-
19.	Թուրքիա «Մարմարա» խմբագրություն	80	-
20.	Թուրքմենստանի ազգային գրադարան	-	1
21.	ԻՖԼԱ-ի տնօրեն	-	1
22.	Իրանի ազգային գրադարան	15	14
23.	Իսրայել, Կրիվոնոս Վ.	2	-
24.	Իսրայել, Հայր Շնորհք աբեղա Պալոյան	17	-
25.	Իտալիա «World Psychiatry»	1	-
26.	Իտալիայի ազգային գրադարան	-	1
27.	Լատվիայի ազգային գրադարան	-	1
28.	Լիբանան, Խաչիկ Դեդեյան	-	1
29.	Լիբանան, Համազգային Վահե Սեթեան	227	-
30.	Լիբանան, Ժիրայր Դանիելյան	-	1
31.	Լիբանան, Մելինե Գարագաշյան	-	1
32.	Լիբանան, Հայկական Կաթողիկոսարանի գրադարան	-	4
33.	Լիբանան «Մարզիկ», «Հասկ» հանդես	4	-
34.	Լիբանան, «Քահիլի» տեղեկատու	2	
35.	Կորեա «International journal of Sustainable Building Tecnology», «International journal of Intangible Heritage», «Koreana», «Journal of Korean Medical Science», «Korean Observer», «Environmental Engineering Research», «Physiology and Pharmacology», «Buddhism and Culture»	16	-
36.	Կորեայի ազգային թանգարան	21	-
37.	Կորեայի Ազգային ասամբլեայի գրադարան	6	-
38.	Կոլորադո, Վահան Թեյլոր	25	-

39.	Կորեայի սահմանադրական դատարան	1	-
40.	«Յառաջ» թերթի խմբագիր Ժիրայր Չոբանյան	-	1
41.	Հոլանդիա, Աննա Մարտիրոսյան	1	-
42.	Հոլանդիայի Հանրային գրադարան, Արտակ Արևշատյան		3
43.	Հոլանդիա, Ամստերդամի համալսարանի գրադարան	-	2
44.	Հայ-լեհական հասարակական կոմիտեի	-	253
45.	Ճապոնիա, Հոկայդոյի համալսարան	1	-
46.	Ճապոնիա «Acta slavica Japonica»	1	-
47.	Ճապոնիա, Ազգային Դիեթ գրադարան	6	9
48.	Ճապոնիա, JLPP	5	-
49.	Մոսկվա, Սյուզի Սահակյան	9	-
50.	Չեխիա, «Օրեր» խմբագրություն	4	-
51.	ԱՄՆ, Ռոբերտ Հարությունյան	1/1 CD	-
52.	ՌԴ, Ազգային գրադարան	19	-
53.	ՌԴ, Աիդա Մարկոսյան	16/2CD	-
54.	ՌԴ, Պետական գրադարան	75	22
55.	ՌԴ, ԳԱԱ գրադարան /ИНИОН/	18	4
56.	Ռուսիանիա, Արշալույս Պարոնյան	1	-
57.	Ռուսիանիա «Արարատ»	4	-
58.	Ուկրաինա, Օդեսայի մարզային հայ համայնքի գրադարան	-	113
59.	Ուկրաինայի միջազգային քաղաքային ֆոնդ	3	-
60.	Ֆրանսիայի ազգային գրադարան	14	10
61.	Ֆրանսիա, Անուշ Կունտ	1	-

<b>62.</b>	Ֆրանսիա, «Աշխարհ» խմբ., «Բանբեր», «Ազադ», «France Armenie», հանդես	18	-
<b>63.</b>	Ֆրանսիա, Ռոբերտ Տեր-Մերգերյան	2	-
<b>64.</b>	Տաշիկստանի ազգային գրադարան	-	5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>822</b>	<b>923</b>

**2012Թ. ԱՏԱՑՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**

1	Ատացումներ	Գրքեր		Հանդես		Լրագիր		Ընդամենը	
		գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ
1	2	3	4	5	6	7	8	9	10
<b>ա) Հայրենական հրատարակություններ</b>									
1	Հանրապետ. ծրի պարտադիր	2.999.326	10951	1.451.890	240/2522	1618750	129/800	6.069966	14.273
2	Գնում անհատ.-ից և կազմակերպ.-ից	15.042.344	2378	-	-	-	-	15.042.344	2378
3	Գրադ. հրատ.	654580	657	-	-	-	-	654520	657
4	Նվեր անհատ. և կազմ.	11187986	15843	2915 500	5318	183515	1441 11814	15957001	22602
5	Նվեր արտ. երկրներից	6313900	7311	5141000	4779	668815	70 2698	12123715	12160
6	Բաժանորդագր.	-	-	13159400	1371	990190	100 2569	14149590	1471
	<b>Ընդամենը</b>	<b>29612401</b>	<b>36759</b>	<b>2258690</b>	<b>14182</b>	<b>5296324</b>	<b>2211</b>	<b>57567415</b>	<b>53152</b>
<b>բ) գրքափոխանակություն</b>									
1	Միջազգ. գրք.- փոխ.	728800	814	219600	429	133900	20 476	1082300	1263
2	Հայաստանյան գրքափոխ.	190600	211	2200	4	-	-	192800	215
3	<b>Ընդամենը</b>	<b>919400</b>	<b>1025</b>	<b>221800</b>	<b>433</b>	<b>133900</b>	<b>20</b>	<b>1275100</b>	<b>1478</b>
	<b>Ընդամենը</b>	<b>30531801</b>	<b>37784</b>	<b>22880490</b>	<b>14615</b>	<b>5430224</b>	<b>2231</b>	<b>58842515</b>	<b>5463</b>

**ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԸՍՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԱԺԻ**

Պաշտոնը	Զբաղեցրած պաշտոն. քանակը	Ըստ կրթության					Ըստ ստաժի		
		Բարձրագույն		Միջին մասնագիտական		Միջնակարգ	1-5 տարի	6-10 տարի	10-ից բարձր
		Գրադ.	Ոչ գրադ.	Գրադ.	Ոչ գրադ.				
<b>1</b>									
Տնօրեն	1	0	1	0	0	0	1	0	0
Փոխտնօրեն	3	1	2	0	0	0	1	0	2
Տնօրենի խորհրդակցական	1	0	1	0	0	0	1	0	0
Գիտական քարտուղար	1	0	1	0	0	0	0	0	1
Գլխավոր տնտեսագետ	1	0	1	0	0	0	1	0	0
Կադրերի բաժնի վարիչ	1	0	1	0	0	0	0	0	1
Կադրերի տեսուչ	1	0	1	0	0	0	1	0	0
Իրավախորհրդատու	1	0	1	0	0	0	1	0	0
Արխիվավար	1	0	1	0	0	0	1	0	0
Գործավար	1	0	1	0	0	0	0	1	0
Գլխավոր հաշվապահ	1	0	1	0	0	0	1	0	0
Գլխավոր հաշվապահի տեղակալ	1	0	0	0	1	0	0	0	1
Ավագ հաշվապահ	1	0	0	0	1	0	0	0	1
Հաշվապահ	1	0	1	0	1	0	1	0	0

Տնտեսագետ	1	0	1	0	0	0	0	0	1
Բաժնի վարիչ	13	7	6	0	0	0	0	3	10
Ենթաբաժնի վարիչ	30	7	16	5	1	1	2	8	20
Գլխ. գրադարանավար	49	13	26	6	3	1	5	7	37
Առաջատար գրադարանավար	40	2	23	5	8	2	15	13	12
1-ին կարգի գրադարանավար	73	0	48	5	15	5	38	26	9
2-րդ կարգի գրադարանավար	15	0	6	1	4	4	10	2	3
Գրադարանավար	25	0	11	0	6	8	17	3	5
Գլխ. մատենագետ	12	4	8	0	0	0	2	5	5
Առաջատար մատենագետ	4	0	4	0	0	0	2	2	0
1-ին կարգի մատենագետ	23	2	18	2	1	0	17	4	2
Ֆոնդապահ	2	0	2	0	0	0	2	0	0
Թարգմանիչ	1	0	1	0	0	0	1	0	0
Ծրագրավորող	6	0	5	0	1	0	5	1	0
Ծառայության պետ	1	0	1	0	0	0	1	0	0
Անվտանգ.և տեսահսկման համակարգերի օպերատոր	1	0	1	0	0	0	1	0	0
Օպերատոր	16	0	12	1	3	0	5	5	6
Վերականգնող	4	0	1	0	1	2	1	1	2



Տնտ. բաժնի վարիչ	1	0	1	0	0	0	1	0	0
Քաղ. պաշտպ. տեսուչ	1	0	1	0	0	0	0	1	0
Խմբագիր	2	0	2	0	0	0	2	0	0
Կազմարար	2	0	0	0	0	2	1	0	1
Պարետ	4	0	3	0	1	0	4	0	0
Պահեստապետ	1	0	1	0	0	0	0	1	0
Ատաղձագործ	1	0	0	0	1	0	0	1	0
Էլեկտրամոնտյոր	1	0	0	0	1	0	0	0	1
Փականագործ	1	0	0	0	0	1	1	0	0
Բանվոր	2	0	0	0	1	1	1	1	0
Էլեկտրիկ	1	0	0	0	1	0	1	0	0
Վերելակավար	1	0	0	0	0	1	1	0	0
Վերելակի մեխանիկ	1	0	0	0	1	0	1	0	0
Հավաքարար	12	1	2	0	2	6	4	5	3
ԸՆԴԱՄԵՆԸ	363	37	213	25	53	35	150	90	123